երկաթագրից բոլորգրին). երկիջեան 31½×9 սմ։ ԳՐԻՉ. Փիլիպպոս քահանայ. Կազմող. Ակոբ։ Գրչութեան ժամանակից է կազմը, 1191 թուից։ «Ի ։ՌԽ։ թվ. հայոց կազմեցաւ տաւնապատճառս այս արդեամբ Ցաւղկայ աղախնոյն ք՝ի . . .» 208ᵇ.։ Կազմի առաջին երեսին շեղագրին մօտ բոլորգրով գրոշմուած է. «Փիլիպպոսի է. զԱկոբ յիշեայ ի ք՝ո»։ ՍՏԱՅՈՂԲ. Գրիչը և իւր կինը, Մարեմ տիկին (մայր մանկանց իմոյ Մարեմ տիկին), որ ապա ՌԽ=1191 թուին նուիրում են «Ա՝ծընկալ ս՝ը նշան»ին (Գեղարդում)։ ՏԵՂ. «ի ս՝ը ժողովարանիս Այրիվանից. ընդ հովանեաւ սրբոյ Ա՝ծածնի և ս՝ը վկայից»։ ԺԱՄԱՆԱԿ. 1190 թ. փրկչական. «ՌԼԹ». (տես պատկերը), լուսանցքում։

Նկարուած է 156ᵇ. բնագիրը 8½×9½ սմ., մեր նկարը 8×9 սմ. առաջին տողը լուսանցքի թուականի հետ։

66. Մատ. Ս. Էջմ. № 921/948 (Կար. 901), Ճառընտիր Եփրեմի. հաստ մագաղաթանման բուլթ, 26×16½ սմ. 298 թերթ։ ԳԻՐ. Արևելեան բոլորգիր անցման, փոքր երկաթագրից, մի իջեան 19,2×11,2 սմ։ ԳՐԻՉ և ՍՏԱՅՈՂ. Յոհաննէս 66ᵐ. 141, 145ᵐ. 170ᵇ. զՅովհաննէս գրողս եւ զհայր իմ Սարգիս բժիշկն յիշեսջիք և ա՝ծ զձեզ յիշէ»։ ԺԱՄԱՆԱԿ. 1196 թ. փրկչական. «ի թ՝ւ իս (sic)։ ՌԽԵ» 170ᵇ և 231ᵐ. Երկու տեղն էլ թուականի գրութիւնը տարբեր է բնագրից, բայց նոյն ժամանակի և գրչի գործ եմ համարում։

Նկարուած է 165ᵐ. Երանելոյն Եփրեմի վասն սատանայի, թէ որպէս խաբէ զորդի մարդկան եւ գայթակղեցուցանէ» վերնագրով հատուածից։ Բնագիրը 13,2×11 առաջին տողը, մեր նկարը 13×10,9, համարեա նոյն մեծութեամբ։

67. Մատ. Ս. Էջմ. Գ. № 163/2606. Մխիթարայ Գոշի Մեկնութիւն մարգարէութեան Երեմիայի։ Հաստ բուլթ, մագաղաթանման. թերթ 234։ ԳԻՐ. Բոլորգիր արևելեան, մի իջեան. 18,6×12 սմ. ԳՐԻՉ. Ձեռագրինն անյայտ, բայց յիշատակարանի գրիչը և ՍՏԱՅՈՂ Դաւիթ (Բոլայրեցի ?)։ Յիշատակարանի հեղինակը՝ անուանում է իրեն «սիրող և համակամ և յորդորիչ նորին (Մխիթարայ Գոշի) Դաւիթ». ընդօրինակել է առել Գոշի օրինակից և սիրոյ ու շնորհակալութեան խօսքեր ունի ուղղած նորան։ «Զի անպարապ եղեալ իմոյս անձին ի ժամանել և դրոշմել զսա, այլ և այլում տխմարաց ետու գծել (յիրաւի, խառը գրչութիւն) և ապաշաւ ունիմ. թեպէտ և ուղղեցի յետոյ»։ ԺԱՄԱՆԱԿ. Փրկչական 1198 թուին. « և արդ իմումս գրութեան զայս տառ ԲԺ ան ամ էր առմանն Ե՝մի . . . և ԽԷ է առ Ո՝ով թուականս Հայոց»։

Նկարուած է 194ᵐ. բնագիրը 12,2×11,7 սմ., մեր նկարը 8,6×8սմ.։

68. Պատառիկ Տ. Խաչիկ ծ. վարդապետի։ Շարական փոքր երկսրագրով. ոչ ուշ քան ԺԲ դարը։ Նման գրով մի ամբողջ ձեռագիր գտնւում է Երուս. Հայոց Ս. Յակոբեանց մատենադարանում։

Բնագիրը 5×5 սմ., մեր նկարը 4×4 սմ.։

69. Մատ. Ս. Էջմ. Գ. № 25/2589, Աւետարան նկարազարդ, մագաղաթ, 23½×18 սմ. լուսանցքները կազմելիս կտրած. թերթ 339։ ԳԻՐ. Միջին եր-